

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԻ ՄԸ ԳԻՏՈՒԹԻՒՆԻՔ

Գ.

| ԷԿՆՈՒՄՓԻԿՈՒԹԻՒՆ | :

Բ.

| ԵԶՈՒ մը հարկաւոր կ'ըսուի՝ երբ որ մէկուն տեղւոյն բնակած սովորական խօսակցութեան լեզուն է, կամ վաճառականութե՛հ համար խիստ հարկաւոր է վաճառականին կամ թարգմանին, կամ երբ անով միայն գիտութիւններ կրնանք սովորիլ: Այսպէս ամենուն հարկաւոր է որ նախ իրենց ազգային լեզուն գիտնան, ինչպէս մեզի՝ հայերէնը, երկրորդ բնակած տեղւոյն հասարակաց լեզուն, որ է տաճկերէն՝ () ամանցւոց հպատակ հայերուն համար, և ուրիշ մեր ազգակցաց համար՝ ռուսերէն, պարսկերէն, անգղիարէն, գերմաներէն. սովորաբար այս երկրորդ լեզուն առանց աշխատութեան մայրենի լեզոյն հետ կը սովորինք, թէ որ դժբաղդաբար երբեմն մայրենւոյն տեղ ալ այս խորթ լեզուներէն մէկը բնական և առաջին լեզու չըլլան, ինչպէս շատոնց. երրորդ անանկ լեզու մը որ ուսմանց համար խիստ հարկաւոր և ամէն տեղ ալ լսուելու ըլլայ, ինչպէս է հիմայ գաղղիարէնը: Այլ երկուքը մերազգեաց գրեթէ ամենուն հարկաւոր են, վերջինը շատոնց. ասոր վրայ կ'ուզենք քիչ մը քննութեամբ խօսիլ, որովհետեւ առջինները առանց ջանքի ալ շատերը գիտեն, և այս ետքինիս վրայ մեծ ջանք մեծ սէր կը ցուցնեն, որ երբեմն չափազանց ալ կ'երենայ մեզի:

| Երբ որ հարկաւորութեանը համար ետեւէ կ'իյնան այս լեզուին, արդէն վերը ըսած պատճառներովս կ'ար-

դարանան. բայց առջի յօդուածին մէջ ըսուածներն ալ կը յիշեցնենմ՝ թէ ամէն մարդ իր վիճակին յարմար չափով ետեւէ ըլլայ անոր, և փուճ տեղը աւելի ատեն չանցնէ աւելի ստանալու այն բանը՝ ուսկից աւելի օգուտ մը չկրնար քաղել: Իսկ անոնք որ չէ թէ հարկաւոր կամ պէտքի համար՝ հապա նորելուկ բարակութեան մը համար սովորելով՝ այնչափ կը զմայլին ու կը յափշտակուին լեզուին ազնուութեանը, անուշութեան ու կատարելութեանը վրայ, որ հրեշտակաց լեզու մը կ'երենայ իրենց, պէտք է քննեն թէ որն է այն կարծեցեալ ազնուութիւնը, և վերջը հետեւին:

| Եզուի մը շատ տարածուած և գործածուած ըլլալը իրեն պատիւ մ'ալ բերէ, չի կրնար անով ճշմարիտ ազնուականութիւն բերել, վասն զի ամենէն շատ գործածուած բանը՝ ամենէն ազնիւն ալ չէ. այսպէս մատենագրութե՛հ ալ ծաղկած ըլլալը՝ իրաւ պարծանք է, բայց լեզուին բնիկ յատկութեանը վրայ գեղեցկութիւն մը չաւելցնէր. և ոչ միշտ շինծու հնչման քաղցրութիւնը՝ հարստութեան և կանոնաւոր ներդաշնակութեան նշան է: Վաղղիական լեզուն իրաւ որ շատ կոկուեր ճկուեր բարակցեր է իր բազմութիւ հեղինակներուն գրչովը, բայց աւելի կոկուած է ինքն իրեն զանազան դարերուն հետ բաղդատելով, ոչ եթէ անով ուրիշ լեզուներու բնական ազնուութեան հասեր կամ անցեր է. իսկ թէ որ ուրիշ շատերէ ալ առաւելութիւն մը ունի՝ այս է որ ճկուելով տեսակ տեսակ բացատրութեան մտաց յարմարեր է, կամ մանաւանդ միտքը ճկեր իրեն յարմարցուցեր է. բայց այս ալ տիրապէս պարծանք չէ, վասն զի ինչպէս բանասիրաց յայտնի է, գաղղիացին և անոր պէս ռամիկ լեզուներ՝ չկարենալով մտաւոր բացատրութեան սահմաններու մէջ բարձրանալ, իրենց ցած սահմաններուն մէջ ջանացեր են դիւրադարձ ըլլալ: Ամէն լեզու ալ այս չափը այս սահմանը ունի, բայց պէտք է խոստովանիլ թէ գաղղիացւոյն և անոր նմաններուն սահ-

մանը խիստ համառօտ է, ընդհակառակն կան լեզուներ որոնց սահմանը այնչափ ընդարձակ է՝ ինչպէս է յոյնը, լատինը, պարսիկը, ինչպէս է դեռ մեր հայկական լեզուն ալ, որ եթէ գաղղիերէնի չափ մշակուին՝ անսահման լեզու մը կը դառնան:

Լեզուի մը բնիկ կատարելութիւնն է՝ իր հարստութիւնը բառից և բացատրութեանց, իր զտութիւնը կամ հարազատութիւնը, իր գեղեցիկ և զօրաւոր առողջանութիւնը կամ հնչմունքը, իր յարմարութիւնը ուրիշ լեզուներու ունէրը թարգմանելու, և իր աճողական յատկութիւնը՝ բարդութեամբ կամ ածանցմամբ, որ չէ թէ լոկ նիւթական բառի աճումն կուտան, հապա մտքի բացատրութեան և ըմբռնողութեան ընդարձակութիւն և կատարելութիւն. ասոնց հետ մէկտեղ վսեմ մտածմանց յարմար վսեմական բարձր կերպ մը կամ շարադրութիւն մը ըսուածքի, ուսկից աւելի ինչ բանի կրնայ ցանկալ մարդուս միտքը: Արդ գաղղիական լեզուն այս ցանկալի յատկութիւններէն շատ զուրկ է, որն որ անհամեմատ առաւելութեամբ ունին հայկականը, հնդկաց գրաւոր լեզուները, լատինը, յոյնը, գերմանացին, իտալականը, հին և նոր պարսիկը, սլաւեան լեզուներէն ոմանք, և այլն. թէպէտ և ասոնցմէ շատերը դեռ գաղղիացւոյն չափ ծաղկած չեն, բայց ասոնց քով գաղղիարէնը միշտ անկատար և խեցբեկ լեզու կրնայ ըսուիլ: Ասն զի երկու լեզուէ խառնած է, ինչտաց կամ հին գաղղիականէն և լատինէն, երկուքն ալ ի-

րարու քաշելով ծումուկեր է, անշուշտ առջինին ուժը, և երկրորդին աննման վայելչութիւնը կորսնցնելով. օտարէն առած բառերն ալ հազարին մէկը ամբողջ չէ, հապա չարաչար կոտորած և այլանդակած է. ան ալ բաւական չէ՝ գրուածին և հնչածին մէջ ալ միութիւն չկայ: Ատինի ողորկ բառը կաղ կաղ գրելէն ետև, գրածէն ալ քանի մը գիր կը թողու հնչած ատենը. իրաւ այսպէս ընելով աւելի անոյշ հնչմունք կ'ելլայ, քան թէ այն այլանդակ և միշտ սխալագիր գրուածքը կարդար, սակայն այն հնչմունքներէն ալ ոմանք իրենց բնական արմատին ուժը և անուշութիւնը չունին, ոմանք ալ թէպէտ և անոյշ են, բայց ինչպէս. բառին երկու վանկէն մէկ վանկ մը միայն հանելով. ասանկով ամէն բառէ ալ անոյշ հնչմունք կրնայ հանուիլ: Վաղղիականին պէս իտալացին ալ լատինէն ելեր է, բայց ասիկայ յիրաւի նման չնորհազարդ լ'թենասայ՝ որ լրամաղդայ ըղեղէն ելաւ, մէկալը նման կաղկաղ չեփեստոսի:

() Իննակի համար առանց ընտրութեան՝ սաղմոսէն երկու տող դնենք ծանօթութեան մէջ այս իրեք լեզուով՝ որ երեւնայ տարբերութիւննին. թարգմանութիւննին ալ աւելի նման քան ընտիր դնելով. դիտեցէք իրեք լեզուին ալ զըրուածքը, հնչուածքը, անուշութիւնը:

Բառերուն խեղճութիւնը այնչափ զգալի չէր ըլլար, թէ որ շէշտ ալ ունենային որով ներդաշնակութիւն կ'առնուր լեզուն, ինչպէս ունին ոչ միայն լատինը և իտալացին և անոնց ազգա-

1. L.	Super flumina	Babylonis,	illic	sedimus,	et flevimus
	Սուփէնա ֆլումինա	Պապիլոնիս	իլլիք	սէտիմուս	էդ ֆլէվիմուս
Իտ.	Sopra i sumi	di Babilonia,	ivi	sedemmo,	e piangemmo
	Սոփա ի ֆլումի	տի Պապիլոնիս	իվի	սէտէմմո	է փիանճէմմո
Գղ.	Sur les fleuves	de Babylone,	là	nous nous sommes assis,	et nous avons pleuré
	Սիւռ լէ ֆլէօվը	տը Պապիլոն	լա	նուս նուս սոմմէ-ասի,	է նուզ-ավօն վլէօռէ

1. L.	cum recordaremur	Sion.	—	In salicibus	in medio
	քում ակքոռաւումուր	Սիոն.	—	Ին սալիցիպուս	ին մէտիօ
Իտ.	in ricordandoci	di Sionne.	—	A' salici	in mezzo
	ին ակքոռաւումուր	տի Սիոննէ.	—	Ա' սալիցի	ին մէծծօ
Գղ.	en nous souvenant	de Sion.	—	Aux saules (qui sont)	au milieu
	ան նուս սուվընան	տը Սիոն.	—	Օ սալ քի սօնթ	օ միլէօ

կիցքը, հասկա նաև անգղիարէնը՝ որ շատ բանի մէջ նման է գաղղիացւոյն, և անոր պէս մանր և սղած բառեր ունի, բայց շեշտերովը՝ իր թուական լեզուին մէջ ալ դաշնակութիւն պահած է. մեր հայերէն լեզուն ալ չունի շեշտ՝ բայց բառերուն ծանրութիւնը և կազմուածքը՝ և առողջանութեան յարմար քերականական ազատ շարքը շատ աւելի ներդաշնակութիւն կուտան մեր լեզուին քան գաղղիացւոյն։ Այն որ այս քերականական կազմութիւնը և շարագրութեան ազատութիւնները քննենք, հոս ամենէն աւելի խեղճ և կապկրպած լեզու մը կը գտնանք գաղղիերէնը, որ ոչ երբէք մտաց կարելի բարձրութեան համեմատ կրնայ զրուցուածքն ալ բարձրացնել վսեմութեւ, ինչպէս ուրիշ հարուստ լեզուները. գաղղիացին իրաւ շատ ընտիր ճարտասաններ և բանաստեղծներ բերեր է, շատ հեշտալուր վիպասաններ, բայց ոչ կրնայ բերել վսեմախօս հոմերոս մը, Վիրգիլիոս մը, Վարեկացի մը, Ստեփանոս Սիւնեցի մը, Վլոփշգոր մը, և ոչ անոնց ուժը և շնորհքը ուժով և շնորհքով թարգմանել, որով և ոչ իսկ ըմբռնել այն հեղինակներուն բարձր և գեղեցիկ հանճարները՝ ինչուան որ անոնց լեզուն լաւ չտուլիւթիւթ լինէր։

Ինչպէս որ անոնց աւելի երկրնալու այս նիւթիս վրայ՝ յիշենք որ նաև անգղիաւորէն, որուն փոյթն ալ հիմայ մտեր է ազգերնուս մէջ, թէպէտ աւելի լաւ յատկութիւններ ալ ունի քան գաղղիականը, բայց նման պակասութեամբ ալ և թլուստ ու սահմանափակ հնչմամբը՝ ազնիւ լեզուաց կարգէն հեռու կը մնայ։ Ինչպէս որ համար դժուար է իրենց լեզուին պակասութիւնը իմանալ, ինչուան որ բարձր միտք մը կամ ուրիշ ազնիւ լեզուաց ծանօթութիւն չունենան. ասանկ երկու յիշեալ լեզուաց բարձրագոյն հանճարները՝ երբոր մտաց բացատրութեան վերին սահմանները կ'ուզեն ելլել և զուրիշ ալ հանել՝ կ'իմանան։

Ինչպէս որ անոնց աւելի երկրնալու այս նիւթիս վրայ՝ յիշենք որ նաև անգղիաւորէն, որուն փոյթն ալ հիմայ մտեր է ազգերնուս մէջ, թէպէտ աւելի լաւ յատկութիւններ ալ ունի քան գաղղիականը, բայց նման պակասութեամբ ալ և թլուստ ու սահմանափակ հնչմամբը՝ ազնիւ լեզուաց կարգէն հեռու կը մնայ։ Ինչպէս որ համար դժուար է իրենց լեզուին պակասութիւնը իմանալ, ինչուան որ բարձր միտք մը կամ ուրիշ ազնիւ լեզուաց ծանօթութիւն չունենան. ասանկ երկու յիշեալ լեզուաց բարձրագոյն հանճարները՝ երբոր մտաց բացատրութեան վերին սահմանները կ'ուզեն ելլել և զուրիշ ալ հանել՝ կ'իմանան։

Լս. • ejus,
էյուս
Իս. • a lei,
ա լէի
Գլ. • d' elle, (nous avons)
տ'էլ նուզ-ափոն

suspendimus
սուսփէնտիմուս
appendemmo
ափփէնտէմմո
suspendu
սիւսփանտիւ

organa nostra.
օրկանա նօսդ.ոս.
gli organi nostri.
լէի օրկանի նօսդ.ոի.
nos orgues.
նօզ օռկր :

Հայերէն գրով ալ գրինք իրեք լեզուին ընթերցուածն ալ որ լաւ երևնայ գաղղիականին պակաս հընչմամբը, և շեշտերէն ալ դատուի՝ թէ որչափ ներդաշնակաւոր են լատինը և իտալացին, և որչափ անաբունեամ և ցուրտ է անոնց քով անշեշտ հոմաձայն գաղղիացին։

Վարդացոյցը կը տեսնայ որ առջի բառը որ մեր հայերէն ի վերջ բառն է, և շատ լեզու ալ նոյնը կը բանեցնեն. ինչպէս Եփեսոսի Բեռ, Գերմանացին Բեռ, Անգղիացին Բեռ, օմանք ալ ատամնային հընչմամբ « աւելցնելով, զոր օրինակ լատինը «սիլլա», իտալացին «սիլա» կամ «սիլա», Սլաւոնացին և Փորթուգալը «սիլ» Գաղղիացին առեր կոտրեր և միավանկ «ի» բառը հաներ է. այսպէս ալ «սիլա» կամ «սիլ» (ուռէնի) բառին «սիլ» կ'ըսեն, «սիլա» (սաղմոսարան, քնար) բառին՝ «սիլ»։ Այսպէս է լեզուին կէսն ալ, որով լեզուն ալ կէս լեզու է. մաս մը գրելով կորսնցուցած, մաս մ'ալ հնչելով. և ահա այս զարմանալի լեզուն է՝ որ այսօրուան օրս բարեւածնունդ լեզուաց Ներքովթն է եղեր։ Ո՛ր էս հայկ։

Ըստ թուրքական այս գարուն առաջին գաղղիարէն գրիչը՝ իր ետքի գրուածքին մէջ գաղղիական լեզուին փոփոխութիւնը կը նմանցնեն բարբարոսաց արշաւանքներով՝ որ ամէն տեղ ամէն ատեն աւերակներ կը թողուն. այսպէս ալ կ'ըսեն մեր մանաւանդ յատուկ անունները միշտ փոփոխուած անիմանալի բան մը դարձեր են։

Եւ այս բանիս լաւ օրինակ կ'ընծայէ Վիրգիլիոսի Մշակականը. գաղղիարէն Տըլիլ մեծ բանաստեղծին թարգմանութիւնը՝ իր շնած սքանչելի գործերէն ալ վեր սեպուած է. հիմայ լատինագէտ, գաղղիագէտ և հայագէտ մը բաղգատե Տըլիլին թարգմանութիւնը մեր հայերէնին հետ. և երբոր հայկականը լատինին հետ ձեռք ձեռքի տուած զուգընթաց տեսնայ, դառնայ նայի թէ ո՛ր մտցեր է Վիրգիլիոս գաղղիացին։

նան իրենց լեզուին տկարութիւնը , ա-
նոր համար հիմայ գաղղիացիք կը մտմը
տան նոր ճամբայ մը բանալ քերդողա-
կան լեզուի . Լնգղիացւոց վերջին գե-
րագոյն բանաստեղծն ալ Պայուն , ի-
տալական լեզուին ետեւէ ընկեր էր ,
ինչպէս ինքը կը գրէ , որ այն օտար ազ-
նիւ լեզուով գրէ միտքը դրած աւելի
մեծ բանաստեղծութիւն մը , թէպէտ
և մահը շուտով հասնելով իտալերէնն
ալ մոռցնել տուաւ , հայերէնն ալ որ
թերեւս աւելի կանուխ սկսեր սովորի՝
անով ալ բանաստեղծութիւն մը գրե-
լու փափագեր :

Եւ յուսամ որ ընթերցողք իմացան՝
թէ մտքերնիս ոչ այս լեզուները վար
զարնել էր , ոչ անոնցմէ ետ դարձնել
մեր ազգը . հապա ճանցընել անոնց
բնական արժէքը . որպէս զի թէ որ
մէկը բաց ՚ի հարկաւոր եղածէն՝ ուզէ
իրեն մտաւոր և բանասիրական զուար-
ճութեան համար նուագարանի տեղ
լեզու մը ընտրել , կարծեմ չի սխալիր ե-
թէ փոխանակ գաղղիարէնին և անգ-
ղիերէնին նախապատուէ իտալացւոյն
ներդաշնակութիւնը , որ նոր լեզուաց
ամէն փափկութեանց հետ՝ հիներուն
ծանրութիւնն և վսեմութիւնն ալ կը
բերէ . լատիներէնը՝ լիաճայն արտասա-
նութեամբ , բնական վսեմութեամբ և
սրտառուզ զրուցուածքով . գերմաներէ-
նը՝ որ թէպէտ և գաղղիացւոյն պէս
կոկուած չէ՝ բայց լի զօրաւոր , բանաս-
տեղծական և փիլիսոփայական բացա-
տրութեամբ՝ հարուստ հանքի մը կը
նմանի . հելլենականը որ մայր ըլլալով
ամենայն իմաստուն լեզուաց՝ հայկա-
կանին հետ ալ հրեշտակային խնամու-
թիւն մը ունի , և թէպէտ հնչմամբ
անկատար , բայց փափկութեամբ գե-
րազանց . արեւելեանց և սլաւեանց մէջ
ալ կան ընտրելագոյն լեզուներ :

Իսկ անոնց որ աւելի ժամանակ և
փափագ ունին լեզուի ետեւէ ըլլալու ,
երկու առաջարկութիւն ունինք . մէկ մը
որ դառնան իրենց հայրենի աշխարհ-
քին սահմանները , և անոր դրացի լե-
զուները՝ որ են հին Պարսից , Սարաց

և Բակտրիացւոց , Օհանը , Պաշլաւի-
կը , Փարսին , և ամենուն հայրն կար-
ծուած հնգիկ Սանսքրիթը , բնեն սով-
որին . որոնք ընդարձակ դաշտի մը պէս ա-
ռատ հունձ կը խոստանան բանասիրա-
կան և ազգային գիտելեաց . և զանոնք
հնձելու համար թերեւս հայու ձեռ-
քէն յարմարը չկայ : Լարոպացիք շատ
աշխատեր և շատ ալ արդիւնք ունին ,
բայց դեռ անկատար է աշխատանքնին ,
և միշտ դժուարին պիտի ըլլայ իրենց այն
լեզուներուն տիրապէս հասնիլ . ինչու
որ ոչ միայն լեզուն իրենց լեզուէն բո-
լորովին օտար է , այլ և մտքի բացա-
տրութիւնը արեւմտի մտքերէն օտար .
անոնք շատ աւելի դժուարութիւն կը
քաշեն արեւելոց լեզուն սովորելու և
հնչելու , քան արեւելիք արեւմտեան
լեզուներուն : Իսկ իմ ազգակցացս՝ որոնց
միտքը արդէն արեւելի , մայրենի լե-
զունին՝ նման , և ՚ի բնէ յաջող լեզուա-
գիտութեան , եռապատիկ դիւրին է
հին լեզուաց ուսումը և անկէ ցանկալի
օգուտներ քաղելը , ազգերնուս լեզուին
և պատմութեանը և բոլոր աշխարհիս
հին մասին լուսաւորութեանը համար .
որոնց բոլոր Լարոպա իրեն ասիական
ընկերութիւններովը շնորհակալ պիտի
ըլլայ . իսկ մենք Սարիբասայ և Խո-
րենացւոյն կարգը պիտի դնենք այն աշ-
խոյժ հայազգի բանասէր պատանին՝ որ
վերոյիշեալ լեզուաց հետեւելով՝ երթայ
Պարսկաստան և հնդկաստան նոյն լե-
զուները խօսող ժողովրդոց մնացորդնե-
րուն մէջ փնտռէ աշխարհքիս յուսալի
հնագոյն գիրքը , առաջին օրէնագիր ,
հին հայոց ալ Պարսից ալ վարդապե-
տութիւնը , մէկ խօսքով Օրադաշտի
գրքերը . որոնցմէ քանի մը հատուած
կամ քաղուած՝ անցեալ դարուն Լնքը-
թիլ Տիւփեռօն գաղղիացին թարգմա-
նելով կրցածին չափ՝ անմահ անուն մը
ժառանգեց , և Լարոպայի նոր լոյս ծա-
ղեց ճանչնալու հին Բնից կարծիքները՝
բարոյականի և օրինաց և փիլիսոփայու-
թեան վրայօք . բայց Օրադաշտայ
գրքերը որ 2,000,000 տող էին , դեռ
խիստ պզտի մասամբ յայտնուեր են , ա-

նոնց ամենէն հետաքննելի մասերն՝ որ
են Մտղաբաշխութիւն, Նէսք, Շը-
մայք, Բժշկութիւն, Սարք Օրա-
դաշտայ, և այլն, բոլորովին անծանօթ
անգիւտ մնացեր են :

Երկրորդ առաջարկութիւնն՝ որ կար-
գաւ ամէն ինչուան հիմայ խօսածներէս
առաջին պէտք էր ըլլալ, և կարծեմ շա-
տերն կը սպասէին, է բնիկ Հայկական
լեզուն լաւ սովորիլը : Արովհետեւ զանա-
զան անգամ յիշած ենք աղգային լե-
զուն գիտնալու պարտքը՝, աւելորդ
կը սեպենք հոս նորէն կրկնել, և ին-
չուան հիմայ ըսածներնուս մէջ կ'են-
թաղրէինք՝ թէ աղգային լեզուն գիտ-
ցողին համար է խօսածնիս . միայն հոս
ալ համառօտ մը յիշեցնենք մեր աղ-
գային լեզուն լաւ սովորելու պատճառ-
ները, ինչպէս մեզի կ'երենայ :

Ա. Պատճառը յայտնի է ամենուն,
որ ամէն մարդու իր մայրենի լեզուն չը-
գիտնալը ամօթ է, և նախատինք՝ թէ
որ կրնայ և չսովորի :

Բ. Վիտնալն ալ ոչ միայն պատիւ և
ազնուականութիւն է, հապա շատ հեղ-
իբրեւ պարծանաց նշան՝ սրտի վսեմու-
թիւն մը, ուժ մ'ալ կուտայ, որ կ'օգ-
նէ նաև գովելի և փառաւոր գործքեր
ընելու :

Գ. Աղգային լեզուն լաւ գիտցողը՝
միշտ փառաւոր անուն մը կ'ունենայ և
ազգին ալ փառք կ'աւելցնէ . օտար լե-
զուաց հետևողը նաև յաջողութեամբ՝
սովորաբար իր փառքը կը ծախէ, թէ
որ անոնցմէ աւելի իր լեզուն չգիտնայ :

Դ. Ամէն լեզուաց համար ալ հասարակ
է այս պարտքերս, բայց մեր հայկա-
նին համար մասնաւոր պարտք մ'ալ
կրնան սեպուիլ իր գեղեցիկ յատկու-
թիւնները և յիշատակները . վասն զի

Դ. Ամէն լեզուէ հաւանական կ'ե-
րենայ աւելի հինը ըլլալն, կամ ամենէն
հիներէն մէկն թէ որ առաջին չսե-
պուի ալ :

Ե. Ըստ սքանչելի կատարելու

թիւններ ունի, լեզուն հնչմունք, ան-
բաւ հարստութիւն բառից, աճեցողու-
թիւն իմաստից ածանցմամբ և ընտիր
բարդութեամբ, որով ամէն լեզուաց
կը յաղթէ . գեղեցիկ բացատրութիւն,
յաջողութիւն թարգմանութեան օտար
լեզուներէ . և թէ որ քաղցրութեամբ
կամ ներդաշնակութեամբ քանի մը լե-
զուէ վար կը մնայ՝ վսեմութեամբ շատ
գերազանց է :

Զ. Բոլոր Աւրոպացուց լեզուներէն
հին է իր ծաղկիլը և մատենագրութիւ-
նը, և լատին լեզուն երկրորդ անգամ
նոր դարերուս մէջ իյնալէն ետքը՝
մէկ կերպով մը իրաւունք ունի հայե-
րէնը աշխարհքիս մէջ ամենէն հին և
շարունակ ծաղկեալ և կենդանի լեզու
ըսուելու . վասն զի բերնով չէ նէ՝ գրը-
չաւ միշտ Դ դարէն ի վեր կենդանի
մնացեր է, թէպէտ և երբեմն պայծառ
երբեմն խաւար : Աւրոպայի իմաստունք
իրենց մայրը լատիններէնը թողեր և ի-
րենց աւանձին լեզուներովը կը գրեն .
Հայոց բանասէրք ոչ երբեք իրենց գրա-
բառը ուրացեր են, թէպէտ և խան-
գարած ալ ըլլան :

Է. Բաւական հարուստ և ընտիր
մատենագրութիւն մը ունիմք հայերէն .
մանաւանդ հին աղգային պատմիչնե-
րու, որոնց նման չունի և ոչ մէկ եւրո-
պական աղգ մը :

Ը. Բայց ալ ունինք սուրբ Հարց
և քանի մը հին Հոյն փիլիսոփայից ա-
մենէն հին և ընտիր թարգմանութիւն-
ներ, որոնք անգին արժէք ունին և նա-
խանձելի են ամենայն աշխարհի : Ա-
նիմք նաև քանի մը Հունաց ընտիր գըր-
քերու թարգմանութիւն՝ որոնց յունա-
րէնը կորսուած է :

Թ. Բանաձին պարծանքի պէս կրնանք
յիշել Մտղաբաշխն և գրոց սքանչելի
թարգմանութիւնը, որուն համար օ-
տարաղգի լեզուագէտ մը ըսաւ. « թա-
» գաւոր ամենայն թարգմանութեանց
» սուրբ գրոց » :

Ժ. Բրեւելի մէջ հիմայ մեր լեզուն
է առաջին ծաղկած լեզու ըստ ոճի նոր
կամ եւրոպական դարերուս :

1 հատ. Ա. 76. Գ. 60. Է. 130 :

2 հատ. Բ. 332 :

ԺԱ. Վաղղիոյ, Վերմանիոյ և Լնգղիոյ մէջ առ դարուս մտած մասնաւոր փոյթը հայերէն լեզուն սովորելու՝ նոր յարգ մը կ'աւելցնէ անոր, նոր պարտք մը մեզի մեր լեզուն լաւ ճանչնալու :

Լ. յս յորդորական պատճառներէս զատ՝ մէկ երկու ստիպող կամ զգուշական պատճառներ ալ կան : ԺԲ. Սեծ հոգով պէտք է մեր հարազատ հայկական լեզուն ծաղկեցնել, որպէս զի կա մնաց կամաց չաւրուի կամ չարգելուի . իրաւ է որ մէկ կողմէն դպրատանց մէջ գրաբառ սովորեցնելով այս բանիս դարման մը կ'ըլլայ, բայց մէկալ կողմէն աւելի մեծ վախ կուտան՝ մէկ մը աշխարհաբառ գրուածոց հիմայ շատնալը՝ օրագրաց, և դասառութեան և զուարճութեան գրքերու միջոցով, որ ամենէն շատ կարդացուած գրքերն են, ուրով գրաբառը կը խափանուի . մէկմ'ալ շատ օտար լեզու կարդալը և անոնցմէ շատ թարգմանութիւն ընելը անոնց խառն ոճովը և ոչ զուտ հայկական, ուրով գրաբառը կ'աւրուի : Լ. յս բանիս մէջ հիմկու եւրոպական լեզուները աւելի փնաս կուտան մեզի քան արեւելեան և լատին և յոյն լեզուները . իսկ այս ետքինս գիտնալը օգուտ ալ կրնայ ընել զուտ հայկաբանութիւնը հելլենաբանութենէն որոշելու համար :

ԺԳ. Հայկական լեզուն կը պահանջէ որ եթէ ամէնքը չէ՝ բայց ոմանք խիստ լաւ գիտնան զայն, հանդերձ արեւելեան և յունական լեզուներով, որպէս զի իմանան և իմացնեն՝ թէ որն է զուտ հայկական բառ և ոճ և զրոյց, որն է եկամուտ . արդեօք սկզբնական կամ անխառն լեզու է հայերէնը, թէ ազգակից հին պարսկին, թէ խնամի սանսքրիթ կամ հնդկա-գերմանացի լեզուաց . որ լեզուաց աւելի նման է և որ մասով . որոնք են իրեն բնիկ և ուրիշներէն զանազանող յատկութիւնները, որով նաեւ իմացուի թէ մեր բարեացապարտ (վարդմանիչք որչափ օգուտ ըրեր են մեր լեզուին կանոնաւորելուն,

և արդեօք փնաս մ'ալ ըրեր են շատ հետեւելով յունական քերականութեան և բացատրութեան : Լ. յս բաներուս համար հարկաւոր կը սեպեմ հայոց գաւառական լեզուներուն և բառերուն գիտութիւնն ալ, մանաւանդ այն հայոց որոնք միշտ իրենց հայրենի լեզուով խօսեր են, առանց թուրքական լեզուի խառնութեան . վասն զի ինծի կ'երևնայ թէ որչափ մեր նախնեաց գրաւոր աւանդներուն մէջ հարազատ հայկաբանութիւն կայ, նոյնչափ մ'ալ այդ գաւառական բառերուն և բարբառներուն մէջ կը գտնուի . և թէ դեռ անոնց ոմանց մէջ կրնանք գտնալ (վարդմանչաց ատենի եղած հայկական լեզուին գաւառական կամ եղբրական ըսուած բարբառները, որ անոնք կ'անուանէին՝ Լորձայ կամ Վորձայ (վիւրտիստանու կողմերը), Տայեցի (Սրաց մօտի գաւառները), Խութայեցի (Սանոյ կողմերը), Զորորդ հայեցի, Սպերացի (կ'երևի թէ Յունաց և Բսորոց սահմանակիցքն), Սիւնի և Լըցախային (Վարապաղու կողմերը, Լըուանից և Վարսից սահմանակից) . թերեւս այս ետքիններուս նման կամ զատ եզերական լեզու մ'ալ ունէին Վուգարք, Ուտիք և Վարսկահայք : Լ. յս քննութիւնները ընդարձակ դաշտ մը կը բանան աշխատելու քաջ հայրենասիրաց, ուր թէպէտ և դժուարութիւններ ալ կան, բայց միշտ զուարճալի է աշխատանքը, և օգուտը մեծ և հարկաւոր . վասն զի դեռ այս բաներուս վրայօք խիստ քիչ քննութիւն եղած է :

ԺԴ. Ետքի պատճառնիս՝ կը փափագիմք որ ամենէն զօրաւոր և ամենէն ընդունելին ըլլար, և այս է՝ որ ամէն ազգայինք ալ հայկական լեզուն սովորին՝ որ գոնէ անով միութեան կապ մը ըլլայ ամենուն մէջ, որ կամ տեղով կամ ռամկական լեզուով կամ կրօնական վարդապետութեամբ զատ ու բաժնուած են իրարմէ : Սէկ մ'ալ որ ամէնքն հասկընան այն գեղեցիկ լեզուն որ Լստուած տուեր է մեզի և որով միայն կրնանք բացատրել գեղեցիկ հայ

և օտար մտածմունքներ, և ամենուրեք ալ հասկընալի ընել. վասն զի այս ռամկական կամ աշխարհաբառ ըսած լեզունիս՝ արժանի չէ մատենագրութեան, զի կանոնաւոր ալ չէ, և ոչ ալ կ'ըլլայ. վասն զի մէկ չէ՝ տասը տեսակ ռամկական կամ գաւառական լեզու կայ ազգերնուս մէջ, որոնք մէկմէկու ծիծաղելի և անյարմար կ'երևնան, և մէկն ալ արդար իրաւունք չունի հասարակաց լեզու ըլլալու: Ուրեմն խօսքերնիս կտրելով՝ այս բանիս համար խոցուած և այրած սրտով կ'աղաչեմք, կը պաղատիմք, կը բողոքեմք որ ժամ մը առաջ ազատէք, ու չայկազունք ազգայինք, մեր ազատ գրիչները՝ այս ռամկական լեզուն գերութենէն, որ շատ հեղ կը սպաննէ գեղեցիկ մտածութիւնները գրչին տակ իր ցածութեամբը, շատ հեղ պաղուութեամբը ետ կը դարձնէ. շատ հեղ ալ գրողը չուզեր իր ազնիւ մտածութիւնները՝ ասանկ աղքատ անկանոն, աւրած, խառնափնդոր ու ստորին լեզուով մը թողուլ, հապա կամ իր հին հայկական լեզուն կ'աւանդէ՝ որ չեն հասկընար իր ազգայնոց բազմութիւնը, կամ տեսնելով որ հասկըցող չկայ՝ տըրտմութեամբ միտքը սրտին մէջ կը թաղէ կ'անցնի:

Հ. Ղ. Մ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏ

Քանի չը գիտէլու բաներ Բժահանու-նեան
ապէն:

ԲԺԱՒՈՐ լաթեղէնը ինչ տեսակ նիւթէ ալ ըլլայ, բժահանին առաջին ընելու գործողութիւնը աս պիտի ըլլայ՝ որ նախ մէյմը ջրով լուայ զանիկայ. ձմեռը տաք ջրով, իսկ ամառը մթնոլորտին տաքութիւնը ունեցող բարեխառն ջրով. այս գործողութեանցս հա-

մար սապոնը լուծող ջուրը քան զամէն ջուր աղէկ է:

Ինչպէս որ մեքսիկէ լաթեղէններու վրայէն Բիծերը հանելու ներքը: Լաթեղէնը պարզ ջրով կամ սապոնով լուայէն ետքը, զառ ի վայր տախտակի մը վրայ կը տաւրածեն, ու բիծը հանելու համար պէտք եղած նիւթը՝ բծին վրայ կը տաւրածեն. թէ որ ռետինի ոգիք է տաւրածելիքը՝ սպունգով մը տաւրածելու է. իսկ թէ որ ու ինչ ուրիշ նիւթ է, կարծր խողանակով մը, և այնչափ ընելու է որ ինչուան բծին մէջը թափանցէ ան նիւթը, և բիծը աներևոյթ ըլլայ. թէ որ բիծը պարզ է, այսչափով գործողութիւնը կը լըմընայ, միայն լաթեղէնը կրկին կրկին լուարու ու չորցընելու է: Իսկ լաթեղէնի մը վրայէն որպէս զի եղի ու ճարպի բծերը մէկէն ելան, և լաթեղէնին գոյնը ամենեւին չթափի, աս ետեւի կերպէն աղէկը չկայ, որ շատ փորձելով հաստատուած է: Եւ հինգ վեց մանր կտոր աղէկ այրած ածուխ, և զանոնք ճերմակ կտաւի մը մէջ դիր պլէ: Բժաւոր լաթեղէնն ալ տախտակի մը վրայ տաւրածէ, որուն տակ առաջուց չորս ծալած անձեռոց՝ մը դրած ըլլաս, և ետքը ան կտաւը որուն մէջ ածուխները պլած են՝ զգուշութեամբ տաս տասուերկու անգամ բծին վրայ դիր ու վերցուր թէթե կերպով կոխելով, ասանկով բիծը մէկէն կը ջնջուի:

Ինչուան հիմա լաթեղէնին մէկ պզտի կտորին վրայ եղած բիծը հանելուն կերպը ըսինք. բայց թէ որ պէտք ըլլայ մէկ ամբողջ զգեստի մը վրայէն փոշիով ծածկած չտեսնուող բիծերը հանել, առջի ընելու բանը աս է որ գաւազանով մը լաթը ծեծուի. քանի որ փոշին կ'ըլլայ՝ բիծերն ալ կը տեսնուին. ան ատեն ամէն բծերուն վրայ ալ ճերմակ չոր սապոնով նշան դնելու է, ու